

ԱՌԱՒՈՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Գոհուրի ՚ն քեզի, ո ՚վ Տէր, մեր Աստուածը, որ քու ողորմութեամբդ մեզ արթնցուցիր մեր գիշերային հանգիստէն: Մեր միտքերը եւս արթնցուր, Տէ ՚ր Աստուած, որպէսզի քեզի դառնալով՝ արդարութիւն գործեն, եւ մեր աչքերը տեսնեն քու փրկութիւնդ: Թող աստուածութիւնդ գայ եւ մեր մէջ բնակի, եւ ողորմութիւնդ հովանի եւ պահապան ըլլայ քեզի ծառայողներուն վրայ: Անոնց հետ՝ մեզ, քու ծառաներդ եւս արժանի ըրէ, որ գիշեր-ցերեկ եւ ամէն ժամ՝ քու պատուիրաններուդ սիրովը բռնուած՝ միշտ անոնց մասին խորհինք, եւ գոհութեամբ փառաւորենք քեզ՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ